

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՍՅԱ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հրագրան համայնքում 2022թ-ի ընթացքում պլանավորվել և իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1.«Համայնքի երաժշտական և արվեստի դպրոցների նորոգում, ջեռուցման համակարգի կառուցում»			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
«Համայնքի երաժշտական և արվեստի դպրոցների նորոգում, ջեռուցման համակարգի կառուցում»			-
Ծրագրի արժեք համայնքի բյուջե/հազ դրամ	-	-	Ծրագրի ամբողջական իրականանացման համար ֆինասական միջոցները չեն բավարարել:
2 « Բազմաբնակարան շենքերի տանիքների կապիտալ նորոգում»			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք/հազ.դր	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում			
1.Վթարային բնակարանների գույքագրում, բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում			Իրականացվել են տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքներ:
Ծրագրի արժեք համայնքի բյուջե/հազ դրամ	8 084,575	8 084,575	Ծրագրի իրականանացման ընթացքում 135 բնտանիքների տրամադրվել է թիթեղ `3000 քմ, իզոգամ` 1000 քմ
3« Համայնքի ներհամայնքային, միջհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների նորոգում և հիմնանորոգում»			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք/հազ.դր	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
1.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում		15310,0	միջթաղամասային ճանապարհների ինչպես նաև ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգման և փոսալցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և խորհրդատվական

			ծառայությունների արժեքը:
2. Ճանապարհների ընթացիկ նորոգման, փոսայցման, և զծանշման աշխատանքներ	31 170,94	31 170,94	Իրականացվել են ներհամայնքային ճանապարհների ընթացիկ նորոգման, փոսայցման (28 829,24 հազար դրամ) և զծանշման(2 341,70 հազար դրամ) աշխատանքներ:
3. Ճանապարհների քարտեզագրում և սխեմավորում	-	-	-
4. Փողոցների և ճանապարհների բարեկարգում, հիմնանորոգում և նորոգում, զծանշում Ծրագրի արժեք համայնքի բյուջե/հազ դրամ	1 527 247,36	806947,364	Միջթաղամասային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ սուբվենցիոն ծրագրի շրջանակում` 1 527 247,36 հազար դրամ, սակայն 2022 թ. կատարողականը` 806947,364 հազար դրամ, որից պետության մասնաբաժին` 922 867,104 հազար դրամ, համայնքի մասնաբաժին` 604380,26 հազար դրամ:
4« Բազմաբնակարան շենքերի բակային տարածքների բարեկարգում ու ասֆալտապատում»			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
1. Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	600,0	600,0	Ներկայացված է սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացված համայնքի Միկրոշրջան թաղամասի բակային տարածքում խաղահրապարակի կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման արժեքը:
2.Բակերի բարեկարգում, ասֆալտապատում	-	-	-
5 « Բազմաբնակարան շենքերի բաժնային սեփականության գույքի` վերելակների վերանորոգում»			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Խափանված, չաշխատող վերելակների վերանորոգում	-	-	Կատարվել է անսարք վերելակների գույքագրում, ուսումնասիրում, առաջնահերթության գնահատում: Համայնքում կա չգործող 33 վերելակ, որից 5-ը բեռնատար:
Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ. դրամ	-	-	Ծրագրի ամբողջական իրականանացման համար ֆինասական միջոցները չեն բավարարել:

6 « Բազմաբնակարան շենքերի կառուցում»			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն

Բազմաբնակարան շենքերի կառուցում	-	-	Ծրագրի նախաձեռնությունը բիզնես սեկտորի ներկայացուցիչներին է:
Ծրագրի արժեք համայնքի բյուջե/հազ. դրամ	-	-	
7 «Մանկապարտեզներում էներգախնայողության և վերականգնող էներգետիկայի ծրագրերի իրագործում»			
Գատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Մանկապարտեզներում հիմնանորոգման, վերանորոգման, ջեռուցման ցանցերի կառուցում, դռների, պատուհանների փոխարինում նորերով, տանիքների հիմնանորոգում, գույքի ձեռքբերում	32 782,608	32 782,608	Թիվ 4 մանկապարտեզի գույքի ձեռքբերում՝ 13 260,34 հազար դրամ, որից բարեգործի ներդրումը կազմել է 11 142,6 հազար դրամ, իսկ համայնքինը՝ 2 117,743 հազար դրամ: Թիվ 4 մանկապարտեզի այլ գույքի ձեռքբերում՝ 2 792,405 հազար դրամ, Շենքի կապիտալ վերանորոգում՝ 16 729,863 հազար դրամ:
Ծրագրի արժեք համայնքի բյուջե /հազ. դրամ	32 782,608	32 782,608	Ամբողջովին ավարտվել է համայնքի թիվ 4 մանկապարտեզի մի մասնաշենքի վերանորոգման ու գույքի ձեռքբերման աշխատանքները:
8.« Համայնքի 2 մարզադպրոցների կապիտալ վերանորոգում»			
Գատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Համայնքի 2 մարզադպրոցների մարզասրահներ իրականացնել բարեկարգվման, վերանորոգման աշխատանքներ	-	-	Աշխատանքներ չեն իրականացվել
Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ	-	-	Աշխատանքներ չեն իրականացվել, ֆինանսական միջոցների սղության պատճառով:
9.«Համայնքի արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում և էներգախնայող համակարգի կառուցում»			
Գատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Համայնքի արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում և էներգախնայող համակարգի կառուցում	106326,0	75630,0	Արտաքին լուսավորության ցանցի կառուցում, արդիականացում՝ 75 630,0 հազար դրամ(սուբվենցիոն ծրարի շրջանակում), որից համայնքի մասնաբաժինը՝ 44634,0 հազար դրամ, պետությանը՝ 30 996,0 հազար դրամ: Հրազդան համայնքի երկու անվանական մուտքերի լուսավորությամբ կոնստրուկցիայի կառուցում՝ 30696,0 դրամ(սուբվենցիոն ծրարի շրջանակում), որից համայնքի մասնաբաժինը՝ 19952,4 հազար դրամ, պետությանը՝ 10743,6 հազար դրամ սակայն աշխատանքները դեռ չեն ավարտվել:
Ծրագրի արժեք համայնքի	106326,0	75630,0	

բյուջե հազ դրամ			
10.«Մաքրական թաղամասում կոյուղու ցանցի նորոգում»			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
«Մաքրական թաղամասից ջրահեռացման ցանցի վերանորոգում»	-	-	Տվյալ թաղամասում ունենալ վերանորոգված կոյուղու ցանց
Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ	-	-	Կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ խնդրին տալով ժամանակավոր լուծում:
11.« Մոդուլային մանկապարտեզի կառուցում »			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Մոդուլային, ժամանակակից մանկապարտեզի կառուցում	-	-	
Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ	-	-	-
12.«Լեռնանիստ գյուղի ջրամատակարարման ցանցի կառուցում»			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Հրազդան համայնքի Լեռնանիստ գյուղական բնակավայրում կառուցել ջրամատակարարման համակարգ	241650.0	203602.491	Սուբվենցիոն ծրագրի շրջանակում իրականացվել է Լեռնանիստի ջրամատակարարման ցանցի կառուցման աշխատանքներ՝ 203602.491 հազար դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 129442.491 հազար դրամ, պետությանը՝ 72160.0 հազար դրամ:
Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ	241650.0	203602.491	
13.« Շառլ Ազնավուրի անվան եղնինների զբոսայգու բեմի և սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքներ: Բնակավայրերում խաղահրապարակներում ու զբոսայգիներում մարզասարքերի ու կարուսելների տեղադրում »			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Շառլ Ազնավուրի անվան եղնինների զբոսայգու բեմի և սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքներ: Բնակավայրերում խաղահրապարակներում ու զբոսայգիներում մարզասարքերի ու կարուսելների ձեռքբերում ու տեղադրում:	32 588,4	21 358,89	Աշխատանքներն իրականացվել են սուբվենցիոն ծրագրի շրջանակում: Կարուսելների ձեռքբերում՝ 8524,40 հազար դրամ, որից համայնքը՝ 5969,8 հազար դրամ, պետությունը՝ 2558,520 հազար դրամ: Շառլ Ազնավուրի անվան եղնինների զբոսայգու բեմի և սանհանգույցի հիմնանորոգման աշխատանքներ՝ 24060,0 հազար դրամից կատարվել է 12830,49 հազար դրամ, որից համայնքը՝ 16842,0 հազար դրամ, իսկ պետությունը՝ 7218,0 հազար դրամ:
Ծրագրի արժեք համայնքի	32 588,4	21 358,89	

բյուջե հազ դրամ			
14.« Հրազդան համայնքի կոմունալ սպասարկման մեքենաների ձեռքբերում »			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Համայնքի ավտոպարկի վերազինում ` ի հաշիվ ժամանակակից տեխնիկաների ձեռքբերման	215 174,0	215 174,0	Սոցիալական ներդրումների ու տարածքային զարգացման ծրագրի շրջանակում համայնքը ձեռք բերեց թվով 4 բազմաֆունկցիոնալ տեխնիկաներ ` վերազինելով համայնքային ավտոպարկը:
Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ	215 174,0	215 174,0	Համագործակցելով Տարածքային զարգացման հիմնադրամի հետ ` համայնքը ձեռք բերեց հետևյալ տեխնիկաները ` Ավտոգրեյդեր ` 73 900,0 հազար դրամ, Էքսկավատոր ամբարձիչ ` 44 100,0 հազար դրամ, Անիվալոր տրակտոր 4-րդ քարշակ դասի ` 11 000,0 հազար դրամ, Բազմաֆունկցիոնալ անիվալոր էքսկավատոր ` պտտվող պլատֆորմով ` 86 174,0 հազար դրամ: Ընդհանուր կազմելով ` 215 174,0 հազար դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է ` 12 402,1 հազար դրամ:
15.« Կանաչապատման ու շրջակա միջավայրի պահպանման միջոցառումներ »			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Բնապահպանական ծրագրի շրջանակում իրականացվող կանաչապատման աշխատանքներ:	7132,636	5873,280	Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Փոքր բուլվարային փողոցին հարակից հատվածների բարեկարգում
Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ	7132,636	5873,280	
16.« Դրամատիկական թատրոնի վերանորոգում և գույքի ձեռքբերում »			
Կատարված աշխատանքներ	Թիրախային արժեք	Փաստացի արժեք/հազ.դր	Մեկնաբանություն
Համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանն ուղղված պայմանների բարելավման շրջանակում իրականացնել դրամատիկական թատրոնի շենքի վերանորոգման, էներգախնայող միջոցառումների անցկացման ու գույքի ձեռքբերման աշխատանքներ:	-	-	Ծրագրի ամբողջական իրականանացման համար ֆինասական միջոցները չեն բավարարել:
Ծրագրի արժեք համայնքի բյուջե հազ դրամ	-	-	

Նկարագրական մաս.

- 2022 թվականի ընթացքում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները.
 1. Հրազդան համայնքի Մաքրավան թաղամասում ավտոտեխսպասարկման կայանատեղիի և ծածկարանի կառուցման աշխատանքներ՝ 41 060,0 հազար դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 26 689,0 հազար դրամ, իսկ պետության մասնաբաժինը՝ 14 371,0 հազար դրամ:
 2. Հրազդան քաղաքի/Կենտրոն և Միկրոշրջան թաղամասերում/, Քաղսի, Լեռնանիստ, Սոլակ և Ջրառատ գյուղերում կանգառների կառուցման աշխատանքների իրականացում՝ 42 360,0 հազար դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 27 534,0 հազար դրամ, իսկ պետության մասնաբաժինը՝ 14 826,0 հազար դրամ:
- Սոցիալական աշխատողի կողմից տարվա ընթացքում տնային այցելությունների քանակը կազմել է թվով 96 այց՝ համայնքի ղեկավարին ներկայացված ֆինանսական աջակցության դիմումների ուսումնասիրություն, տնայցերի իրականացում սոցիալական վիճակի ուսումնասիրության, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների, անձանց բացահայտում ուսումնասիրման, ուսումնասիրվող ընտանիքներում առկա վեճերի կարգավորման, կենսապայմանների հետազոտության և տեղահանված ընտանիքների կարիքների գնահատման նպատակով:
- Նախադպրոցական և արտադպրոցական կրթության հաստատություններ կատարվել է ընդհանուր 71 այցելություն, նպատակը՝ ուսումնադաստիարակչական պրոցեսի ուսումնասիրում, դասապրոցեսների համապատասխանությունը դասացուցակներին, հաստատությունների երեխաների հաճախումների, ճաշացուցակների, պահեստի փաթեթների ուսումնասիրում:
- Իրականացված հանրային միջոցառումներ՝
 1. «Հայի բռունցք» հասարակական կազմակերպության հետ համատեղ միջոցառումների իրականացում Հրազդանի դրամատիկական թատրոնում՝ «Հանդիպում հայտնի հրազդանցիների հետ» խորագրով:
 2. Հուլիսի 30-ին Հրազդանում տեղի ունեցավ «Հրազդանը՝ ՀՀ 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի պաշտոնական բացման արարողությունը: Հանդիսավոր պայմաններում Հրազդանին հանձնվեց խորհրդանշական փոխանցիկ բանալին և հավաստագիրը, որով «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» տիտղոսը շնորհվեց Հրազդան քաղաքին:
 3. Սեպտեմբերի 5-ին, Հրազդանի դրամատիկական թատրոնում մեծ հաջողությամբ տեղի ունեցավ «Թվացյալ երկրի բնիկները» պիեսիս պրեմիերան, բեմադրիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Հակոբ Ղազանյան:
 4. Օգոստոսի 12-ին Երիտասարդական մայրաքաղաք Հրազդանում հանդիսավոր կերպով նշվեց Երիտասարդության միջազգային օրը՝ «Սերունդների համերաշխություն. ստեղծելով աշխարհ՝ բոլոր տարիքի մարդկանց համար» կարգախոսով: Երիտասարդության միջազգային օրը նշվեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Հրազդանի համայնքապետարանի, Երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոն Բարեգործական ՀԿ-ի, UNFPA Armenia/ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի, UNICEF Armenia - Յունիսեֆ Հայաստան, UN Armenia - ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ-ի և UNHCR Armenia/ՄԱԿ-ի Փախստականների գործակալության համատեղ ջանքերով: Միջոցառումների շարքը բացվեց Սպորտային-ժամանցային մրցույթով՝ Հարավային թաղամասի Կլոր բակից, որն անցկացվեց առանց

տարիքային սահմանափակման: Միջոցառման պաշտոնական մեկնարկը տրվեց Կոտայքի մարզի երիտասարդների համար նախատեսված «Տեղեկատվական օր և երիտասարդական հնարավորությունների տոնավաճառ» միջոցառմամբ: Միջոցառմանը հրավիրված հասարակական կազմակերպությունները, մարդասիրական ընկերությունները և նախաձեռնությունները խոսեցին իրենց գործունեության մասին և ներկայացրին երիտասարդների զարգացման և զբաղվածության բազմաթիվ ծրագրեր և հնարավորություններ: Ներկաները շրջեցին նրանց տաղավարներով և ծանոթացան իրականացվող աշխատանքներին և դրանց նպատակներին: Օրվա ընթացքում Երեխայի և ընտանիքի զարգացման կենտրոնում երիտասարդները մասնակցեցին Արեգ Բալայանի «Սթրիթ արթ» դասընթացի տեսական և Շառլ Ազնավուրի անվան զբոսայգում՝ գործնական մասերին: Միջոցառման մասնակիցները շրջայց կատարեցին Հրազդանի տեսարժան վայրերով, իսկ Սահմանադրության հրապարակին կից պուրակում մասնակցեցին ինտերակտիվ խաղին: Օրվա ավարտին ամփոփվեց ՕՍՄ գաղափարների մրցույթի արդյունքները, և հաղթողներին հանդիսավոր կերպով պարգևատրեցին դրամաշնորհներով: Գեղարվեստական մասն ուղեկցվեց «Nemra » ռոք խմբի համերգային ծրագրով:

5. Սեպտեմբերի 26-ին տեղի է ունեցել ամենամյա հայ-ռուսական երիտասարդական 8-րդ համաժողովի պաշտոնական բացման արարողությունը, ամաժողովը շարունակվել է մինչև սեպտեմբերի 28-ը: Համաժողովը նախատեսված է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների, երիտասարդ առաջնորդների (շուրջ 100 մասնակից) համար:

6. Հոկտեմբեր ամսին տեղի ունեցան «Մեկ բաժակ սուրճ Սուրեն Դավթյանի հետ», Գրքի և գրադարանի կարևորությունը երեխաների կյանքում և Եղիշե Չարենցի 125 ամյակ-գրադարանավարի օրվա կապակցությամբ միջոցառումները:

7. Նոյեմբերի 18-ին տեղի ունեցավ «Երևանի 5-րդ կարճամետրաժ և ուսանողական ֆիլմերի միջազգային կինոփառատոնի» բացումը՝ ՀՀ 2022 թվականի «Երիտասարդական մայրաքաղաք» Հրազդանում:

8. Նոյեմբերի 30-ին Հրազդան համայնքում կազմակերպվեց աշխատանքի տոնավաճառ:

9. Դեկտեմբերի 6-ին տեղի ունեցավ «ՀՀ 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի ամփոփիչ միջոցառումը, որի ընթացքում Հրազդանը փոխանցիկ բանալին հանձնեց 2023 թվականին երիտասարդական մայրաքաղաք հռչակված Մեծամորին:

10. Տարին ամփոփվեց դեկտեմբերի 25-ին վառելով Հրազդան համայնքի գլխավոր տոնածառի լույսերը: